

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրութեան միջոցաւ համարները մէջ.
Թիֆլիս. Тифлис, Редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեգր. № 253.

Կորոսքութիւնը բաց է տալու տեղան 10—2 ժամ.
(բացի կիրակի եւ տոն օրերէն).

Միջոցաւ տարածութիւնը ընդունւում է ամեն լեզուով.
Յարգելաւորութիւնները համար վճարում են
իւր քաղաքէն զատ ամբողջութեամբ 10 կոպէկով.
Տէլեգր. № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՂՈՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Կիրակոսեայ զրոյց.
Կենդանի արձան. Հայոց ներկայացումները.
Օրհներային ներկայացումները. Ներքին լուրեր.
ՍՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսից Շահի վերա-
դարձը. ՆԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. ՀԵՌՈՒ-
ԳԻՐԵՐ. — ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Աւստրիայից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՈՐԵՆԱԶ ԶՐՈՅՑ

Այս ամբողջ, ընթերցող, եկէջ գնանք մի հե-
ռուար, կրթած ու խղճով տեղ: Շատ կան
մեզանում այդպիսի տեղեր. եւ դուք գիտէ՛ք,
որ դրանք ամենքը կարող են եւ յատուկ ա-
նուն չունենալ, որովհետեւ ընդհանրապէս
յայտնի են «իսկ անկիւններ» հասարակ,
հաւաքական անուններով:

Սիրում էք դուք խուլ անկիւնները: Իմ կող-
մից պիտի ասեմ, որ ինձ համար շատ հաճելի
է այնտեղ փոխադրվելը: Եւ ես պարտաւոր
եմ նայել եւ առաջ բացառելով թէ ինչեւ:

Ահա իմ անկեղծ խոստովանութիւնը: Մենք
ամենքս գիտենք, որ կանքը մեծ քաղաքներ
ում է, եւ ես պատրաստ եմ, ինչպէս ասում
են, շուտաւ ձեռքով ատորագրել որ սա ճիշտ է:
Բայց զարմանալի բան: Մեծ քաղաքների կենտ-
րոն ինձ մի տեսակ երկիր է աղքատ. եւ երբ
եմ փորձում եմ բացատրել ինձ դառ պատճա-
ռը, գտնում եմ, որ երեւի մեծ քաղաքներում
կանքը աւելի խիստ ու ուժեղ կերպով է
ընդգծւում, աւելի ուժեղ կերպով է արտա-
յայտւում, աւելի անողորմ խոստովանում է
լարում շղերը, ընդունակութիւնները, պայքարի
բոլոր միջոցները, այդ պատճառով էլ այդպէս
երկիր է աղքատ:

Դուք ներկայ էք կենտրոն ամենաթուր խն-
ջոյքին. կան մեծ վայելչութիւններ, որոնց տի-
րանայ է հարկաւոր Տերանայ առանց մրցու-
թեան չէ կարելի: Եւ մրցութիւնը հաւաքում է,
կատարել: Նա զենքեր է պահանջում յաղթա-
նակի համար, եւ դուք տեսնում էք, որ մարդը
տուեց այդ պայքարին ամեն ինչ, որ ունէր—
հողին, մարմինը, առաքինութիւնները, արտա-
ները: Ոչինչ չէ խնայում: Բարեկեցութիւննե-
րի աշխարհում մի տեղ գրաւելու եւ հաստատ,
ամուր պահելու համար: Բարոյական զենքե-
րը—սա մեր աշխարհի չափ հին մի ճշմարտու-
թիւն է:—Թող ու անդր են այնտեղ ուր
պէտք է խել, չը խղճալ, գլխի ժանդերներով ու
հիւսններով: Պէտք է, ուրեմն, գործեն անբա-
րոյական զենքերը. եւ սրանք ոչ միայն միշտ

չողողում են, այլ եւ աւելի վատը, աւելի
սարսափելի—կատարելագործւում են անդա-
դար: Այժմ հրէշաւոր բան է համարվում պա-
տերազմը, քանի որ այնքան կատարելագործվել
են հրազենները: Բայց նրանից սրբան եւ սր-
բան հրէշաւոր է խաղաղ անուանված մրցու-
թիւնը, որի մէջ մարդկային բացասական հա-
կունքները կատարելագործվում են օր ու գիշեր,
գերազանցելով պողպատն ու կրակն անգամ:

Ահա ինչպէս է մեծ քաղաքը ուժեղ կերպով
ընդգծում կենտրոն: Ինչ ուզում է՝ ասացէ՛ք,
ինձ մեծ քաղաքներում երեւում է սոսկալի
այլապատկեր. ինձ թւում է թէ մարդկութիւ-
նը չէ կարող երջանիկ լինել, եթէ աշխատում
միայն մեծ քաղաքներ լինեն: Դուք չէ՛ք սա ճիշտ
չէ: Բայց դուք համարեցէ՛ք այդ բանը ինձ յա-
տուկ նախապայաւարմունք: Թող այդպէս լինի,
ես իմ զգացմունքից բաժանվել չեմ կարող:

Եւ դուք արդէն ասում էք, որ ես, մեծ քա-
ղաքներ ատող, իսկոյն կը սկսեմ իդէալիկա-
նացնել խուլ անկիւնները, դովել ընկուծիւն
այն մեծած տեղերը, որոնց մենք ամենքս ա-
մենայն իրաւունքով ճանիճ ենք անուանում:

Այ, ընթերցող, ես ոչ մեծ քաղաքներն եմ
ասում, ոչ խուլ անկիւններն եմ իդէալիկա-
նացնում: Մեծ քաղաքներում էլ կան տարրեր,
որոնք միայն համակարգ, սէր կարող են զար-
թեցնել մեր մէջ, ինչպէս եւ խուլ անկիւննե-
րում քիչ չեն այնպիսի երեւոյթներ, որոնք
մեծ քաղաքներում կատարելով կենսական վատ
պայքարից էլ զգուշի են:

Էլ ինչ մնաց, հարցնում էք դուք:—Շատ
բան, պատասխանում եմ ես:

Խուլ անկիւններ... Այնտեղ ագիտութիւն,
այնտեղ անօգնականութիւն, կեղտից ու խա-
ւարից տանջվող մարդկութիւն: Լին անուն են
նրանք ստացել—խուլ... Ոչ լսում են, ոչ լսել
են տալիս...

Հէնց այդ դժբախտութիւնն է, հէնց այդ ան-
ապագութիւնն է, որ մի առանձին հրապոյր է
հաղորդում խուլ անկիւններին: Նրանք ընած
են, բայց մեր ժողովրդի ահագին բարոյական
ոյժն են կազմում: Նրանք տկուր են, կարօտ
են, բայց նրանք են մեր հիմքը, մեր էութիւնը,
եւ առանց նրանց մենք ոչինչ ենք:

Ահա այդպիսի մի տեղ եմ ուզում տանել
ձեզ, ընթերցող: Խուլ անկիւն, այն էլ սրբան
խուլ: Պարսկաստանի խորքերում ընկած մի
խեղճ գիւղաքաղաք—Նոր-Հուլան:

Անցնալիքներում ես կարգում էի «Մշակ» մէջ,
թէ ինչպէս Նոր-Հուլայի ծնողներն ու երե-
խաները ճանապարհ էին դնում իրանց սիրած
ուսուցչին եւ վարժուհուն: Երեւանից, ասում
է թղթակիցը, լաց էին լինում: Եւ այդ ման-

կական արտասուքները այնքան ահագին հե-
ռաւորութիւնից թռան, եկան իմ առջեւ եւ
իմ արտասուքներս էլ գրգռեցին:

Խեղճ Զուլա: Մի ժամանակ նա հպարտ էր
եւ փառանքաւոր Մի ժամանակ համարեա ամբողջ
հայութիւնը աչք դրած էր նրա վրա, նրանից
էր սպասում միութարութեան, խրախոյսի
ձայն իր անասելի դժբախտութիւնների մէջ:
Եւ Զուլան անզգայ չէր, նա ցոյց էր տալիս որ
արժէ յոյս դնել իր վրա: Պարսկաստանի խոր-
քերում խրած այդ փոքրիկ գաղթականութիւնը
սրտով իր բուն հայրենիքի հետ էր: Նա էր զե-
կալարում, ուղղութիւն տալիս ազգային գոր-
ծերին, նա էր կաթողիկոսներ նստեցնում էլ-
միտման զանի վրա: Նա էր դպրոց բաց անում,
մարդ էր ուղարկում Եւրոպա՝ դրբեր տպագրե-
լու: արհեստը սովորեցու համար: Այն ժամանակ,
երբ Հայաստանը խոր գիշերվայ գերեզմանում
էր պառկած, Զուլան էր, որ դպրոց ու գիրք էր
սիրում, վառ էր պահում խղճով լուսաւորու-
թեան ճրագը, թող չէր տալիս որ հայի մտա-
ւոր երկնքից անհետանայ վերջին ազատ աստղը:
Հարուստ ու փարթաւ էր Զուլան, բայց—
զարմաւոր երեւոյթ—եսամով չէր: Նրա զբո-
ւանը բաց էր լսման անգամ, երբ պէտք էր
հայի թշուառութիւնները ամբողջ Այդ հարւա-
տութեան տուրքներն են: Լազարեան ճեմարանը
Մօսկվայում, Մարդասիրական ճեմարանը Կալ-
կաթայում, Ռաֆայէլեան վարժարանը Վենետի-
կում: Մանր-մանր բարեարարութիւնները անթիւ
ու անհամար են:

Բայց արեւելքում մնացւոյն բան չը կայ: Պար-
սիկը թող տուեց, որ ապարանքներով ու պա-
լատներով ճոխացած Զուլա կազմվի, պարսկի
էլ իր ձեռքով ընտելեց, հիմնաւոր արեց այդ
չընդ քաղաքը: Պարսիկը չէ սիրում բարեկեցու-
թիւն, նրան աւերակներ են հարկաւոր: Սրկի
ընդհանուր աղքատութեան մէջ Զուլան իր
հարստութեան պատճառով մի սոսկալի յան-
ցաւոր դուրս եկաւ: Կարծեցին թէ Զուլայի
հարստութիւնները բաւական են, որ ծոյլ, ըն-
կած, դժբախտ Պարսկաստանը ուտելու բան
ունենայ, ընտելեցին նրան: Դրութիւնը չը փոխ-
վեց, պարսիկը էլի նոյն պարսիկը մնաց, բայց
շուղայեցուն էլ իր ետեւից հասցրեց Զուլան
հասաւ այն դրութեան, որ այլ եւս պարսիկի
նախանձը չարժեք չէր կարող: Հաւատարմութիւն
աղքատութեան, ագիտութեան, մտաւոր մեռե-
լութեան մէջ—այս է մահմադական արեւելքի
սիրած դրութիւնը:

Եւ այսօր խեղճ ու կարօտ է Զուլան, այսօր
նա է ձեռք մեկնում ուրիշներին, ողորմութիւն
խնդրում: Զը լինի այդ ողորմութիւնը՝ կրթած
է Զուլան:

Ողորմութիւն տալիս են այդ դժբախտացած
հարուստին: Հէնց այդ ողորմութեան մի տե-
սակն էր, որ լացացնում էր Զուլայի երեխա-
ներին: Խեղճ փոքրիկներ: Նրանք էլ Սպահանի
կողքին, մարդկութիւնից եւ լուսաւորութիւնից
այնքան հեռու, իմացել են, թէ ինչ է լաւ ման-
կավարժը, ինչ է բարեկարգ դպրոցը: Նրանք
գիտէին որ Կովկասից պէտք է գնալ լաւ մար-
դիկ, որ կարողանան լաւ սովորեցնել իրանց:
Եւ լացով էին ճանապարհ դնում Կովկասի
ուսուցչին եւ ուսուցչուհուն, որոնք ամուսին-
ներ էին:

Բայց շուղայեցի երեխաները անբախտ չէին:
Ճանապարհ դնելուց յետոյ նրանք չը պիտի ու-
տէին: ՎՊԻ, այն հեռուոր Կովկասից էլ կը գտն
արեւելք: Կովկասից նորերը գնացին նրանց
կրթութիւնը շարունակելու համար:

Գնացողներից մէկը իմ ծանօթն է, մի օրիորդ:
Երբ նա եկաւ ինձ միտք բարով ասելու՝ ես
չը կարողացայ իմ զարմանքն ու հիացմունքը
չը յայտնել նրան:

Եւ ինչպէս չը յայտնէի: Թիֆլիսից Զուլա...
Ի՞նչ տարածութիւն, ի՞նչ երկիր, ի՞նչ ճանա-
պարհներ: Այս բոլորը արհամարում էր մի...
Մի հայ օրիորդ:

Մի ժամանակ հայ կինը արտասունք թափե-
լով գերի էր գնում Պարսկաստան, գնում էր
իբրեւ մի ամենադժբախտ էակ, իբրեւ մի պա-
տահական պարսիկի սեփականութիւն: Այսօր
հայուհին համարձակ, ժպիտը բերանին, իր յո-
ժար կամքով գնում է նոյն խաւար ու բարբա-
րոս երկիրը՝ երեխաներ կրթելու, կանոնաւոր,
բարեկարգ դպրոց պահելու համար:

Հրաշք չէ՞ սա:
Հրաշք չէ, հարցնում եմ, որ Պարսկաստանի
այն հեռուոր, անյայտ անկիւնը գնացող մի
հայ օրիորդ է, մենակ, առանց ազգականների
ու բարեկամների, վտար ինքն իր վրա, լցված
վճռականութեամբ, առաջնորդված դպրոցական
գործի սուրբ գաղափարով... Առաջին օրհանկն
է սա, որ տեսնում է խեղճ Զուլան: Թարիւր,
Թէհրանը տեսել է, բայց նրանք համեմատա-
բար մօտ են մեզ: Մինչդեռ Սպահան, Զուլա...
—Ուրեմն գնում էք, հարցրի ես օրիորդին
մի քանի անգամ:

Թէեւ գիտէի որ գնում է, բայց նոյն հարցը
մի քանի անգամ կրկնել ինձ շատ բնական էր
թւում, այնքան անօրինակ էր դէպքը: Եւ ա-
մեն անգամ օրիորդը պատասխանում էր ինձ:
—Այո, գնում եմ:

Նա շատ պատմութիւններ էր լսել եւ կար-
դացել Պարսկաստանի մասին: Նա նոյն-իսկ չէր
գտել Զուլայի տեղը իր աշխարհագրական քար-
տէզի վրա: Մտնողների թախանձանք, արտա-
բոյր անկիւններում ուժեղում էր անում իր
թերթի համար: Վիեննայի հասարակութեանը
արդէն ծանօթ էր խմբագրական կազմը: Նոյն
մարդիկն են դրանք, որոնք ութ տարուց ի վեր
հրատարակում են «Die Zeit» անունով լուրջ
եւ առաջադէմ շաբաթաթերթը: Մեծ անհամ-
բերութեամբ էր սպասվում թերթը, եւ առաջին
համարները շատ շուտ սպասվեցին:

Այդպիսով օսմանեան լծի տակ հեծող ժողո-
վուրդները կունենան այսուհետեւ Աւստրիայի
մէջ երկու յարգելի քաղաքական օրգաններ—
«Die Information» եւ «Die Zeit», որոնք մա-
քառելով ծախու մամուլի դէմ՝ սիւստեմատի-
կաբար կը պայքարեն այդ ժողովուրդների
դատել: Վերջին տարիների փորձը մեզ բերում
է այն համոզմունքին, որ «աղմուկը» մամուլի
թէ ուրիշ միջոցներով՝ եթէ անկարող է որեւ-
է արմատական լուծում առաջ բերել՝ գէթ կա-
րողանում է նպատակ այն հանգամանքին՝ որ
գրեթէ անհնարին են դառնում մեծ կատա-
ստրօֆները, որոնք տարիներ առաջ, եւրոպա-
կան ընդհանուր անտարբերութեան մէջ, այնքան
տխրութեամբ պայթում էին իրար ետեւից...

Դա, այսպէս ասած, «բացասական» վատտակ
է, բայց դա վատտակ է:

Ego

ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՆՍՏՐԻԱԿԻ

Վիեննա, հոկտեմբերի 1-ին

Մամուլը այնքան ծանրակշիռ գործ ունի քա-
ղաքակրթութեան մէջ, որ իւրաքանչիւր մի
շառ թէ քիչ խոշոր հրատարակութեան երեւան
գալը կազմում է մի անցք արեւմտեան ազ-
գերի կենտրոն: Այդպէս է մասնաւորապէս
Աւստրիայի մէջ, ուր մամուլի իշխանութիւնը
առանձնապիւր կազմ է եւ ուր գոյութիւն ունե-
ցող խոշոր օրգանները, «Freie Presse»-ի պէս,
կաշառվելու չափ ստորանում են իրանց կոչու-
մից: Այդ տխուր հանգամանքը առանձնապէս
չնշտվում է այստեղ:

Աւստրիական մամուլը, ինչպէս յայտնի է,
քաղաքական խնդիրների շարքում մեծ տեղ է
առնում թիւրքական իրականութեանը—այլա-
նակ, հայկական, մակեդոնական եւ ուրիշ
խնդիրներին, որոնք բոլորն էլ այժմէութիւն
ունեն: Տարաբախտաբար, շատ քիչը նոյն-իսկ
համաւերապահ օրգաններից ընդունակ են
արժանաւոր, օրհանգի դիրք բռնել այդ կնճառ:

հարցներում, որոնք նկատմամբ հանրային կար-
ծիքը դեռ բաւականաչափ չէ լուսաւորված:

Տարիների ընթացքում մենք ականատես ենք
լինում գրեթէ բոլոր երկրների մէջ միեւնոյն
տխուր եւ ըմբոսանցուցիչ իրողութեան—խո-
շոր օրգանները, որոնք ճանաչված են իբրեւ
միանգամայն աշխիւ ու անկաշառ ներքին քա-
ղաքականութեան մէջ՝ արտաքին գործերում
դաւաճանում են ամենատարրական աշխու-
թեանը, կուրանում են մէջիդէի փայլից, ծա-
խու են հանում իրանց սկզբունքները: Նրանք
կան իրանց հովանաւորութեան տակ են առ-
նում արիւնատարութիւն դաժնապետին, կամ կազ-
մակերպում են «լուսնի առաջնորդութիւն»...

Որքան մեծ էր մեր պայանքն ու հիւսիս-
փութիւնը, երբ մի օր հաւատարմութիւն մեզ, որ
նոյն-իսկ ֆրանսիական ամենալուրջ եւ համա-
տարած քաղաքական թերթը երբեմնապէս կա-
շառվելու սովորութիւն ունի: Բոլոր սրտով
կուզէինք չը հաւատալ, բայց ասողը մի անձ-
նաւորութիւն էր, որը աւելի քան ծանօթ է
վարժապոյի ետեւում կատարվող այլապատկե-
թիւններին եւ որը այսօր իսկ խմբագրողն է
իշխող թերթի քաղաքական բաժնի: Ոսկին չա-
փազանց զայթակեցուցի է, եւ հազուադէպ
են ճշմարիտ համաշխարհային օրգանները à la
Frankfurter Zeitung, որոնք քաջութիւն ու-

նեն դիմադրելու այդ գայթակղութեան:

Այդ տեսակէտից վերին աստիճանի միութա-
րական է մի լաւ օրգանի երեւան գալը աւստ-
րիական մայրաքաղաքում: Ուստի «Die Zeit»
օրաթերթի մասին է, որի առաջին համարը
լոյս տեսաւ մի քանի օր սրանից առաջ եւ որը
իր շուրջը հաւաքած ունենալով լուրջ ու իրա-
զեկ մասնագէտներ, խոստանում է աշխու-
թեամբ միջին «Freie Presse»-ի հետ եւ դառ-
նալ քաղաքական պատկանելի մի թերթ:

«Միջոցաւ շատ է ազգականվել, ստի, կեղ-
ծիքի համաճարակը վարակել է բոլորին: ձեր
ժողովուրդը եւս, բարեկամ, յաճախ գոհ է լի-
նում չարամիտ ինֆուռուացիաների՝ հէնց այն-
տեղ Աւստրիայում: Մեր թերթը պիտի լինի
բարձր՝ գծում միտուններից, մանր կրքերից,
նա պիտի մերկացնէ ճշմարտութիւնը բոլոր
խնդիրներում, նա պիտի տայ փաստեր եւ մի-
այն փաստեր, ձեզ մնում է օգնել մեզ այդ ան-
հրաժեշտ աշխատանքի մէջ».—այսպէս էր խոսում
մեզ հետ «Die Zeit»-ի խմբագրութիւնը, որը
մեզ եւս պատիւ էր արել աշխատակցութեան
հրաւիրելու:

Ռէկլամը անհրաժեշտ մի չարիք է ժամանա-
կակից քաղաքակրթութեան մէջ. «Die Zeit»-ի
խմբագրութիւնը եւս նախ քան հրատարակու-
թիւնը՝ չորս ամիս շարունակ կայսրութեան

սուղանքը, Թիֆլիսում ունեցած պարտավորւմը Ամեն ինչ թաղելի հետաքրքիր էր. օրիորդը դրանց մասին չէր մտածում, այլ ինձանից խորհուրդներ էր հարցնում, թէ ինչ մանկական պիեսներ վերցնել՝ Ջուղայում ներկայացումներ սարքելու համար։

Եւ դուք անտեղի կը համարէիք իմ դարմանքն ու հիւսցումները։

Նա, մի համեստ, չքաւոր վարժուհի, գնաց իր սուրբ պաշտօնի ետեւից։ Գնաց առանց աղաւաղի, առանց ցոյցերի, աչքի առջեւ բռնած անարմարութիւններով, առանց անհեշտ մի կարգի ու երկար շարքի։ Նա կը տանէ այդ բոլորը, կը կրէ իր խաչը նոյնպէս լուռ եւ անշուշտ, բայց կը հասնէ իր նպատակին, կը օրէն ջուղայեցի մանուկները արտասուները։

Անա ինչեւ առանձին հրապարակ ունեն մեր խուլ անկիւնները, հարստութիւնը, դժբախտութիւնը այնտեղ անտեսելի են. բայց մեզանից դուրս են գալիս իմ ծանօթ օրիորդի պէս աննկատելի հերոսներին, զոնք են այնտեղ մի սուրբ առաքելութեան պաշտօն վարելու։

Մեր տխուր կեանքի մէջ կայ աւելի գեղեցիկ երեւոյթ։ Հետաւոր, խուլ անկիւն փորձում է մեզ, կանչում է մեզ։ Նրա դժբախտութիւնը չէ այնքան խղճալի, որքան այն, թէ կարող ենք մենք ձեռք մեկնել նրան, սրբել նրա արտասուները, երջանկութեան ժողովարարութեանը նրա մանուկների դէմքի վրա...

Եւ դուք է գալիս, որ, այն, ունենալ Դուրս է գալիս, որ աննկատելի, համեստ հերոսներին գտնում են եւ մեր մէջ։ Իմ միտն են գալիս բերրական այն պատմութիւնները, ուր երկիրներ խնայում է մի ապականված ժողովուրդի ունի այն մի քանի արդարների, որոնք գտնվում են նրա մէջ։

Մենք էլ, այն, այդ դրութեան մէջ ենք։ Եթէ պահում ենք, պատճառն այն է, որ մի ինչին, հազիւ նկատելի փոքրամասնութիւն զեռ հաւատ ունի, զեռ գիտէ ինքն իրան զրկել, զոնկ գտնել համար։

Երբ ինձ մօտ գալիս է գաւառացի խեղճ երիտասարդը, որ Թիֆլիսում մի կտոր հաց է աշխատում ծանր աշխատանքով, երբ նա հանում տալիս է ինձ իր հաւաքած, իրան այնքան հարկաւոր մի բուլբուլ եւ գիրք է առնում, ես ասում եմ. «Անա ում համար գոյութիւն ունի հայոց գրականութիւնը։ Երբ ես ասում եմ այստեղ Ռուսաստանի հետաւոր մի անկիւնից եկած մի որեւէ փոքրէկ կամ ուրիշ հասարակ արհեստավորի ձեռնարկած նամակը, որով նա ինձանից գիրք է պահանջում, ես նայում եմ այդ անկարծ, հազիւ հազ շարժվելու կարողութիւն ունեցող գրչի գծած անձեւ, խղճով տառերին եւ ասում եմ ինձ. «Պէտք է գրել, պէտք է գրել տալ»։

Դեռ չը տեսայ, որ հայ ինտելիգենտը եւ նրա պաշտած հայ բուրժուան այդպէս վերաբերվին հայերէն գրքին։ Եւ ամեն անգամ, երբ գիրք եմ հրատարակում, իմ միտքը սկսում է թափառել գաւառացի աղքատ երիտասարդների կցարարաններում, Ռուսաստանի երկաթուղիների վրա գտնվող փոխերում։ Այդ տեղերից պիտի դուրս գան իմ գիրքը գնողները։ Հայ օղջազարը գլխից մինչեւ ոտը ստամոքս է, իսկ հայ ինտելիգենտը գտել է արդէն, որ կարելի է հայ լինել առանց հայերէն լեզու իմանալու...

Մի քանի արդարների, մի հաւատացող չնչին փոքրամասնութեան պատճառով է, որ մենք չենք խորտակվում, զեռ կանգ։

Համեմատեցէ՛ք, խնդրեմ, Ջուղա գնացած իմ ծանօթ օրիորդին հարկւրաւոր, հազարաւոր նրա սեւակիցների հետ, որոնք փայլատակում են սայլաններում, մաշում են Գոլոմիսկի պրօսպեկտի մայրերը։ Ես չեմ ասում թէ նրանք միայն շարժում մօղային խաւթիներ են։ Ո՛չ, այդ խաւթիները մէջ էլ մի-մի շարժվում է խեղճի, կարօտի համար մի բան անելու ցանկութիւնը։ Անուանեցէ՛ք դրան մօղային պահանջ, անուանեցէ՛ք պարսկութիւն սպանելու մի միջոց, բայց վերջապէս ցանկութիւն է դառնալու է նա կատարվում։

Անա հայ տիկինը կամ օրիորդը բարեհաճեց փոքր ինչ ուշադիր լինել զէպի հասարակաց կարիքը։ Ինչ հիպոստան ցոյցեր, ինչ աղմուկ ծնողաներ։ Դեռ ու զէն են թոշում կապիւրները՝ տարածելու ամեն տեղ, թէ այս-ինչ տիկինը կամ այս-ինչ օրիորդը բարեհաճեց այս-ինչ բարեգործական երեկոյթին այս-ինչ տեղում կանգնելու ներդրութիւնը յանձն առնելու։ Լազարիները արձանագրում են այդ զէպեր, երեկոյթների տէրերը շտապում են իրանք խորին հրապարակական շնորհակալութիւնը մատուցանելու։ Հասարակութեան մէջ մատով են ցոյց տալիս այդպիսիներին, կրօնում են նրանց

հետաքրքրական գործիչը տիտղոսով եւ այլն։

Իսկ Թիֆլիսից Սպանիան գնացող հայ օրիորդը... Նրան ոչ ոք չը նկատեց էլ։ Ինչ է նա Մի չքաւոր աղքիկ, որ իր աշխատանքով պահում է իր ընտանիքը։ Նա կարող էր այստեղ էլ, Թիֆլիսում էլ, գործ ունենալ. բայց վեր կացաւ ու գնաց Պարսկաստանի խորքերը, այն խորքերը, որոնք մի որեւէ Չամբէղէ կամ Տասմանիա են յիշեցնում։ Այդ ինչ տարօրինակ ցանկութիւն է՝ անպատճառ ընկնել Տասմանիա, երբ կարելի է Թիֆլիսի փափուկ ու չըքեղ կողքերում այս ու այն կողմը թռչել եւ զեռ շնորհակալութիւններ մի ամբողջ տարափ, սիրուն տիտղոսների մի ամբողջ պատկ առանալ՝ մի երեք-չորս ժամ կանգնելով մի որեւէ բարեգործական բաժնետոմս...

Տարօրինակ է, այն, Տասմանիա գնալու ցանկութիւնը, տարօրինակ, անհասկանալի, վայրենի է մի անբարեխիղճ, այլասեւորդ հասարակութեան համար։

Եթեմարտիկն չէ տասմանիացի երեխաների համար մանկական պիեսներ տանելու պաշտօնը յանձն առնել։ Ուրիշ անուն չունի այդ վարժուհին։ Այս է միտքը, եթէ հարցնէք մեր խաւթուներին ու խաւթուներին։ Բայց նրանք պատասխանելու կարիք էլ չունեն, որովհետեւ երբեք չեն կարողում հայերէն, չը գիտեն էլ, որ հայերէն լրագիրը այսպիսի հարցեր է տալիս նրանց։

Ո՛չ, ընթերցող։ Մենք զեռ պահում ենք մի քանի հատ արդարների շնորհիւ։ Մենք զեռ կորած չենք, քանի որ մեր միջից դուրս են գալիս աննկատելի, համեստ հերոսներ ու հերոսուհիներ։

Շնորհակալ լինենք մեր խուլ անկիւններին։ Նրանք են մեր գրքերը կարգում, նրանք են հերոսական զգացմունքներն ու մեր փորձերը արդարների։ Շնորհակալութիւն գաւառացի չքաւոր ընթերցողին, որ իր պարզ, առեւտրական, սրտի խորքից բխած համակրանքով ոգեւորում է մեզ, գործնեցի, անդադար աշխատելու եռանդ է տալիս մեզ։ Շնորհակալութիւն հետաւոր, հարկւր ետեւում կորած Ջուղայի մանուկներին։ Նրանց մաքուր, հրեշտակային արտասուները վարձատրում են մեր աննկատելի հերոսներին...

Կենդանի ԱՐՁԱՆ

(Նամակ Խմբագրութեան)

Կենդանի արձան...

Այսպէս է ասում պ. Գր. Չալոյանը։ Այսպիսի 22-ին Միք. Նալբանդեանի կիսարձանի բացման առիթով Պարսկաստանի խորքերում մի ստորին կամ միջնակարգ դպրոց բանալու Գաւառ-Քաթիկոսի եւ Նալբանդեանի յիշատակը յաւերժացնելու համար... ու այդ կը լինէր միակ ու կենդանի արձանը...

Ո՛րքան ճիշդ է նկատում պ. Չալոյանը։ Սակայն հայր անտարբերութիւնն ու ժպտութիւնը այնքան ակնբերեւ է, այնքան ճշգրիտ՝ որ յարգելի պարոնը չէ կարողանում համարձակ անելու... նրան թւում է այդ մի ցնորք, մի երազ...

Երբեք, միթէ դա չի լինի մի ցնորք, երազ, որ մենք տեսնէինք իրականութեան մէջ։ Այս մի արտաքին յոռետեսութիւն է, մի տեսակ օկեպտրիզմ, որ վիշապի պէս կրծում է, մաշում շատ ազնիւ ու եռուն արտեր...

Այդ տեսակ մարդկանց տիպար է ներկայացնում եւ պ. Չալոյանը «Մշակում» տպւած նամակում Միք. Նալբանդեանի կիսարձանի բացման առիթով։

Ինչ ազնիւ, բարձր գործերի կուզէր ձեռնարկել պ. Չալոյանը եւ նրա նմանները...

Մէկը իր կենքը, իր գոյութիւնն է նուէր բերում, միւսն էլ պէտք է իր լուսնին, իր ունեցածի մի չնչին մասը նուէր բերի... (խօսքը հայ ունեւորի մասին է)։

Բայց հայ ունեւորը, բուրժուան այդքան շուտ չի տալ, նա մասնաւոր այնպիսի զէպերում՝ երբ հարցը գալիս է ազգի առաջադրմանութեան ու բարեաւանման։

Հայ բուրժուան եւ օրօրոցի մէջ եւ կենքի մէջ ուրիշ մօտիվներով է սնված, ուրիշ հոգով է կրթված...

Եւ անա այս դառն իրողութիւնն է ճշում ու մի տեսակ տիպոս տառաման մէջ ձգում պ. Չալոյանին, ու նա չէ կարողանում վերատախտիկմամբ շարժել իր գրիչը եւ իրաւունքով եւ համարձակ բանալու սրտի փափագը՝ մի օր տեսնելու յուսով եւ կենդանի արձանը...

Ո՛ր է իմանում, գուցէ մի օր յարգելի պարոնի հետ «հրաշք» տեսնենք...

Արտ. Արալանց

Թ Ֆ Լ Ե

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Ուրբաթ, հոկտեմբերի 4-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում կայացաւ հայոց հինգերորդ ներկայացումը։ Այս անգամ խաղում էին Շէքսպիրի «Արքայ Լիր» ողբերգութիւնը, թարգմանութիւն Յովհաննէս-Խան Մանեհեանի, բայց Շէքսպիրի գործը եւս չը կարողացաւ գրաւել զէպի թատրոն Թիֆլիսի հայ հասարակութիւնը։ Թատրոնը նոյն-իսկ կիսով չափ լիք չէր եւ աչքի էր ընկնում մասնաւոր մի երեւոյթ, այն, որ հայոց թատրոն յաճախում են մեծ մասամբ գաւառացի հայեր, մինչդեռ Թիֆլիսցիները կարծէք տեղեկութիւն անգամ չունեն հայոց թատրոնի գոյութեան մասին։

Շէքսպիրի անմահ ստեղծագործութեան արդեւիք հայոց բեմի վրա ներկայացնելը ողբան էլ հաճելի երեւոյթ է եւ կարող է շոյել մեր ազգային ինքնասիրութիւնը, բայց չը պէտք է մոռանալ, որ նա ներկայացնում է եւ անազնի դժուարութիւններ։ Մասնեանի թարգմանութիւնը, որքան էլ կատարելաւ եւ ամենալաւ թարգմանութիւնն է համարվում եւ դժուար թէ երկար ժամանակ մենք լուսագոյնն ունենանք, բայց մենք նկատեցինք, որ հայ հասարակութիւնը հեշտութեամբ չէ հասկանում այն բարձր ոճը, որ յատուկ է այդ թարգմանութեան. մենք այդ բացատրում ենք նրանով, որ հայոց ներկայացումներին յաճախող հասարակութիւնը զեռ պատրաստ չէ լաւ ըմբռնելու Շէքսպիրի գործերը առհասարակ եւ մասնաւորապէս, այնպիսի գրական ընտիր ոճը, ինչպէս Մանեհեանի թարգմանութիւնն է։ Բացի դրանից, այդպիսի լուրջ պիէսների ներկայացումը կարող է աղոյծել միայն այն ժամանակ, երբ դերակատարների անսամբը աղոյծութեամբ խաղալ, իսկ այդ մենք չենք կարող տանք «Արքայ Լիր» ներկայացումն մասին։ Իր ամբողջութեամբ ներկայացումը թոյլ էր եւ հարկ եղած տպաւորութիւնը չը գործեց, բայց առանձին դերերի վերաբերմամբ, նա շատ եւ շատ բաւարար էր։ Պետրոսեան, որ խաղում էր «Արքայ Լիր» դերը, բաւական աղոյծութեամբ տարաւ սպերից մինչեւ վերջ իր խաղը. մասնաւորապէս աղոյծված էին նրա գրիւնը եւ հագուստը եւ երեւում էր, որ նա ինքնուրուշ ուսումնասիրել էր իր դերի արտաքին կողմերը։ Մենք կարծում ենք, որ ներկայ խմբի մէջ Պետրոսեանին է պատկանում առաջնութիւնը այդ տեսակ դերերի համար։ Ֆեդեցիկ տարաւ իր խաղը եւ Արեւիկին էջուարդի դերում։ Մասնաւորապէս շատ լաւ էր, երբ ներկայացնում էր խելագար ձեւացող Տոմին։ Միջոցին կատարողացաւ մտնել իր դերի մէջ վերջին արարածութեամբ, երբ ներկայացնում էր կոմս Գլոստերին։

Ինչ վերաբերում է կանանց դերերին, պէտք է ասենք, որ Գոնիերի դերը կատարող օր. Մ. Մ., որն ինչպէս երեւում է առաջին անգամն էր բեմ դուրս գալիս, շատ լաւ խաղաց, եւ մենք խորհուրդ կը տալինք օրիորդին շարունակել ծառայել հայոց բեմին։

Հ. Ա.

ՕՊԵՐԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Օպերային խումբը ուրբաթ, ամսի 4-ին, խաղաց «Լիր» Օրօրոցի «Տրամպան» վերջնական դերում կայացաւ վան-Դեր-Բրանտի երկրորդ դերակատար Առ հասարակ երգչուհու երգելու ձեւով երեւում է կանոնաւոր շփոյնի ուղղութիւնը։ Ձայնը բաւականին դուրեկան է մասնաւորապէս մենք տեսնել վերջինիս. ցածր նոտաները թոյլ են եւ անհնչիւ, դրա համար երգչուհին խոյս է տալիս այդ նոտաներից։ Շնչառութիւնը այնքան էլ լաւ չէ. շուտ շուտ շունչ է քաշում այն տեղերը, ուր երաժշտական տեսակետից անկարելի է. իսկ յայտնի է, որ երգեցողութեան մէջ ամենամեծ պայմաններից մէկը շնչառութիւնն է, (ով ունի լաւ շնչառութիւն՝ նա կարող է եւ լաւ երգել)։ Մի մեծ առաւելութիւն երգչուհու արժանատիութիւնը ների մէջ՝ այդ հիմնալի արտասանութիւնն է (դիկցիա) եւ խելացի ու ընտել խաղը։ Տեղ-տեղ օրիորդը երգում է ինքնուրոյն չափով եւ կադանսներ փոփոխված, օրինակ, առաջին գործողութեան մէջ չէ երգում այնպէս ինչպէս գրված է։

Երկրորդ գործողութեան մէջ երբ վերջնական լուսն է Ալֆրէդի հօր Ժերմանի աղաչանքով մոռանալ իր որդուն եւ չանբարեխաղախ իր ընտանիքը, իսկ միւս կողմից վերջնական բռնում սէրը զէպի Ալֆրէդը՝ այդ տեսարանում երգչուհին իր երգով եւ մասնաւոր գեղեցիկ խաղով գրաւեց ժողովրդի ուշադրութիւնը։

զէպի տարակուսած վերջնական Անհամեմատ մեծ կը լինէր այդ գիշերվայ տպաւորութիւնը։ Եթէ Ալֆրէդի դերում պ. Լեւոնին յարգանքով վերաբերվէր զէպի մեծ երաժիշտ վերջին հեղինակութիւնը եւ ի չարը չը գործ դնէր ժողովրդի սողութիւնը։ Խորհուրդ ենք տալիս երգչին Ալֆրէդի դերում չը դուրս գալ։

Պ. Պոլեւանովը այդ գիշեր վատ էր զգում իրան. երկրորդ գործողութեան մէջ զգական աւրան «Դու. մոռացար քո հայրենիքը» վաւ երգեց եւ նա մասնաւոր ձայնը շատ էր ցածրացնում։ Օրկեստրը պ. Շտանբերգի ղեկավարութեամբ կրկնեց վերջին գործողութեան մանիք առաջ «Բնասողական» թատրոնում այս անգամ բաւականին ժողովուրդը կար։

Ա. Մամաջան.

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԻՆԸ

Երկրագործութեան միջնաւոր Ա. Երմոլով երեկ ամբողջ օրը զբաղված էր այցելուներ ընդունելով։ Թէ առաւօտեան թէ նախաճաշից յետոյ ներկայացան նրան պաշտօնական անձինք եւ խնդրատուներ։ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան կողմից ներկայացան խորհրդի անդամները։ Միջնաւոր ժամի 2-ից յետոյ այցելեց Բուսարեանական այգին։ Երեկոյեան երկաթուղու գնացքով նա ճանապարհ ընկաւ զէպի Պետրոսեանի։

Հաղորդակցութեան ճանապարհները միջնաւոր իշխան Մ. Ի. Նիկիտի գալուստը ապաստում է վաղը, հոկտեմբերի 6-ին։

Քաղաքացիական Պաշտօնակատարը ներկայացրեց Թիֆլիսի Նահանգապետին քաղաքային դռնայի ձայնաւորների ընտրողական թերթերը եւ ընտրողների ցուցակները եկող քառամսակի համար։

Ֆրանսիական կառավարութիւնը իր հիւպատոսների եւ դիվանագիտական գործակալների միջոցով հաւաքել է եւ այս օրերս հրատարակել է «Journal Officiel»-ում տեղեկութիւններ այն բանի մասին, թէ որքան Ֆրանսիական առեւտրա-արդիւնաբերական ձեռնարկութիւններ գոյութիւն ունեն գնաւաճան երկրներում, որքան հողային օգտակարութիւն պատկանում է նրանց, ինչպիսի մասնակցութիւն ունեն Ֆրանսիական դրամատէրերը ֆինանսական ձեռնարկութիւններում, հանքերում, երկաթուղիական ձեռնարկութիւններում, նաւահանգրտային հիմնարկութիւններում, որքան դրամագումներ է ծախսել նա պետական եւ հանրային փոխառութիւնների վրա։ Այդ հաշիւը երեւում է, որ ֆրանսիացիները ծախսել են աշխարհի գնաւաճան պետութիւններում մի ահագին գումար, այն է 29,855 միլիոն ֆրանկ, այդ թւում Եւրոպայում—21,012 միլիոն, Ասիայում—1121 միլիոն, Աֆրիկայում—3,693 միլիոն, Պոլինեզիայում—51 միլիոն եւ Աւստրալիայում—3,972 միլիոն ֆրանկ։ Ռուսաստանում ֆրանսիացիները զբաղ են 6,966 միլիոն ահագին գումար, աւելի շատ, քան եւրոպական պետութիւններից իւրաքանչիւրում։

Երեւանից գրում են «Новое Обозрение» թերթին, որ հոկտեմբերի 2-ին սրբապատկար Ալեքսի վրաստանի էկզարխը, նահանգապետի եւ Երեւանի ռուս հասարակութեան մի քանի պատուաւոր ներկայացուցիչները ուղեկցութեամբ, ուղեւորվեց Էջմիածին։ Շանապարհին, հովուապետը, հետաքրքրվելով Էջմիածին մօտ ամենապատկառելի քրիստոնէական տաճարի աւերակների պեղումներով, ծանօթացաւ տեղում այդ պեղումների պատմութեան եւ ձեռք բերած արդիւնքների ամբողջ մանրամասնութիւնների հետ։ Սրբապետին զեկուցանում էր այդ մասին պեղումները ղեկավարը եւ նախաձեռնողը, ինչպիսի վարդապետը Արեւիկոպոլսոյ հոյակապ ձորի տունէական հնուութիւնների (եկեղեցիների բաւառակութիւնը երգչուհու արժանատիութիւնը ների մէջ՝ այդ հիմնալի արտասանութիւնն է (դիկցիա) եւ խելացի ու ընտել խաղը։ Տեղ-տեղ օրիորդը երգում է ինքնուրոյն չափով եւ կադանսներ փոփոխված, օրինակ, առաջին գործողութեան մէջ չէ երգում այնպէս ինչպէս գրված է։

